

021101.02.6 «ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ
ՔՆՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Ուսուցումը երկաստիճան է՝ բակալավրիատ և մագիստրատուրա:

Բակալավրիատում ուսման տևողությունը չորս տարի է: Շրջանավարտը ստանում է արվեստագիտության բակալավրի որակավորում:

Դիմորդը մասնագիտական **բանավոր** քննություն է հանձնում «Օպերատորության հիմունքներ» (ՕՊՀ) առարկայից:

Դիմորդից պահանջվում է՝

✓ լուսանկարչական և տեսաօպերատորական տեխնիկայի վերաբերյալ տեսական և պրակտիկ գիտելիքներ (օպտիկա, բնական և արհեստական լույս, ֆոտոկոմպոզիցիա):

✓ լուսանկարչական ալբոմ-հավաքածու՝ իր կատարած լուսանկարներով (20 լուսանկար 13x18 կամ 15x21 չափսի). լուսանկարների էլեկտրոնային տարբերակները՝ սկավառակի վրա:

Ալբոմ-հավաքածուի բացակայության դեպքում դիմորդին չի թույլատրվում մասնակցել ընդունելության քննությանը:

Քննությունը հարցատոմսերով է՝ երկու հարցով: Քննատոմսի երրորդ հարցն առնչվում է դիմորդի ներկայացրած որոշ լուսանկարների վերլուծությանը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1-7 միավոր ստանում է այն դիմորդը, որի պատասխանը և ներկայացրած ալբոմ-հավաքածուն չեն համապատասխանում առաջադրված պահանջներին:

8-12 միավոր ստանում է այն դիմորդը, որը հանդես է բերում տարրական իմացություն լուսանկարչական խցիկի կառուցվածքի, օպտիկայի, սև-սպիտակ լուսանկարչության մշակման պրոցեսի վերաբերյալ:

13-17 միավոր ստանում է այն դիմորդը, որը, բացի նշված գիտելիքներից, տիրապետում է կոմպոզիցիայի, գույնի, լույսի, պատկերի հեռանկարի իմացությանը:

18-20 միավոր ստանում է այն դիմորդը, որը, նշված գիտելիքների իմացությունից բացի, ունի ստեղծագործական վառ երևակայություն, պատկերացում, յուրահատուկ ընկալում և արտակարգ մեկնաբանություն տալու ունակություն:

Մասնագիտական գրականության ցանկ

1. А.П.Ткаченко, В.Н.Цацулин. Англо-Русский словарь по телевидению, аудио- и видеотехнике, изд. „Белорусская Энциклопедия,, , Минск, 1998г.
2. Л. П. Дыко, А. Головня "Фотокомпозиция"-Москва "Искусство" 1962 г.
3. Р. Ильин "Фотография при естественном освещении" – Москва "Искусства" 1960 г.

4. А. Симонов "Фотография при искусственном освещении" – Москва "Искусство" 1960г.
5. «Հայկական Սովետական հանրագիտարան» (հոդվածներ կինոգործիչների, թատրոնի, երաժշտության, կերպարվեստի, ճարտարապետության մասին):
6. Տեսախցիկներին վերաբերող ինտերնետ կայքեր և վերլուծական դաշտեր:
7. Киноэнциклопедический словарь,' Москва, "Советская энциклопедия, 1986.
8. Б. Даниель. Искусство видеть, С.Петербург, ,2002г.
9. Д. Килпатрик. Свет и освещение, изд. „Мир,, , Москва, 1988г.
10. Р. Хеймен. Светофильтры, изд. „Мир,, , Москва, 1988г.
11. Ю. Герман. От слайдов-к слайдфильму, изд. „Искусство”, Москва, 1989г.
12. Վ. Քոչար, Հայ լուսանկարիչներ, Երևան, 2007թ.:
13. Ա. Առաքելյան, Լուսանկարչություն, 1959 թ.,
14. «Ֆիզիկա» դասագիրք, (օպտիկայի բաժին):
15. Уэйд Д. Техника пейзажной фотографии. М.; "Мир", 1989.
16. М.Фримен. Фотографирование диких животных и природы, М., „Планета” , 1987.
17. И.А.Головня. С чего начиналась фотография, изд.,„Знание,, , Москва, 1991г..